



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՆՈՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսված 152,600,000 ՀՀ դրամից առ 31.12.2016թ. ուղղվել է 143,062,500 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՓՄՁ պետական աջակցության 2016 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ոլորտային աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցության, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով շուրջ 4300 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների **տրամադրվել է 8917 աջակցություն:**

Տրամադրված աջակցության ուղղություն	2016 թվականի ընթացքում տրամադրված աջակցության քանակ
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	152
Ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնելեգիական դասընթացներ	126
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	8417
Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում	18
ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում	193
Ոլորտային բիզնեսներին աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում	11
Ընդամենը	8917
Տեղական տնտեսական զարգացման ծրագիր	5
Այլ ծրագրեր	
Իրացված գյուղտեխնիկայի քանակ	5
Նոր սերնդի ՀԴՄ-ների արժեքի փոխհատուցման ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներ	472

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 4%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 96%-ը ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 780, Արարատի մարզում՝ 1215, Արմավիրի մարզում՝ 404, Գեղարքունիքի մարզում՝ 695, Լոռու մարզում՝ 1572 Կոտայքի մարզում՝ 1520, Շիրակի մարզում՝ 791, Սյունիքի մարզում՝ 408, Վայոց Ձորի մարզում՝ 675, Տավուշի մարզում՝ 500, Երևան քաղաքում՝ 357 (*Հավելված 1*):

2016թ.-ի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքները, ըստ առանձին ուղղությունների և աջակցության ծրագրերի, ներկայացված են ստորև.

1. ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում

ՓՄՁ պետական աջակցության ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համագործակցություն է հաստատել նոր կազմակերպությունների հետ (*մանրանասները ներկայացված են 8-րդ բաժնում*):

Ա.թ. հունիսի 17-ին փոխգործակցության հուշագիր է ստորագրվել Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և ՌԴ Խանտի-Մանսիյսկի (Յուգրա) արտահանման աջակցության կենտրոնի (ՔՄԿ) միջև: Հուշագրի համաձայն՝ կողմերը Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) շրջանակում փոխգործակցելու են ՓՄՁ-ների գործունեության միջազգայնացման, արտաքին կապերի ամրապնդման և երկու կողմերում գործող ձեռնարկությունների միջև տնտեսական կապերի հարցերում:

Ա.թ. սեպտեմբերի 20-ին Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և Հոլանդացի ավագ փորձագետների ՔՄՄ կազմակերպության միջև ստորագրվել է փոխըմբռնման համաձայնագիր: Փաստաթղթի նպատակն է նպաստել հոլանդացի ավագ փորձագետների փորձի և գիտելիքի տարածմանը Հայաստանում գործող ՓՄՁ-ների շրջանում: Հոլանդացի փորձագետները կամավորական սկզբունքով պատրաստակամություն են հայտնել ՓՄՁ ՋԱԿ-ի առաջարկած ՓՄՁ-ներին տրամադրել փորձագիտական և տեխնիկական խորհրդատվություն, աջակցություն տրամադրել նրանց՝ միջազգային շուկաների հասանելիության և հայկական ՓՄՁ-ներում միջազգային փորձի ներմուծման հարցում: Հոլանդացի ավագ փորձագետները Հայաստանում աշխատելու են 5 փուլով: Նրանց աջակցությունը լինելու է թիրախային՝ հիմնված հայտ ներկայացրած ՓՄՁ-ների կարիքների վրա: Փորձագետների թիրախում լինելու են հիմնականում ագրոբիզնեսի և զբոսաշրջության ոլորտներում ներգրավված ձեռնարկությունները:

Ա.թ. սեպտեմբերի 30-ին Սոչիի տնտեսական ֆորումի գործնական ծրագրի շրջանակում Ռուսաստանի Դաշնության Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման դաշնային կորպորացիան (ՓՄՁ կորպորացիա) և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը են փոխըմբռնման հուշագիր: Հուշագրով կողմերը պլանավորում են հաստատել երկարաժամկետ համագործակցություն փորձի փոխանակման ոլորտում՝ ՓՄՁ ոլորտի զարգացման հիմնական ուղղություններով՝ ներառյալ ֆինանսական, երաշխիքային, տեղեկատվական, մարկետինգային աջակցություն, ՓՄՁ սուբյեկտների կողմից պետական գնումների մուտքի ընդլայնում, տարածքային կոմպլեքս, ինչպես նաև ձեռնարկատիրության և բիզնես-գործընթացների իրականացման ոլորտների ուսումնական ծրագրերի մշակում և իրականացում: Տվյալ համագործակցության կարևորագույն բաղադրիչներից է Հայաստանում Բիզնես Նավիգատորի տեղայնացումը: Բիզնես նավիգատորը առցանց տեղեկատվական/խորհրդատվական գործիք է, որը համակողմանի աջակցում է ներդրողին ճիշտ որոշում կայացնելու ապագա գործունեության տեսակի, վայրի, ներդրումների ծավալի, առկա պահանջարկի և մրցակիցների մասին և հնրավորություն է ընձեռում ավտոմատ կերպով ձևավորել բիզնես պլան:

Ա.թ. նոյեմբերի 18-ին Բելոռուսի մայրաքաղաք Մինսկում փոխգործակցության համաձայնագիր է ստորագրվել Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի, Բելառուսի Ձեռներեցության

հանրապետական կոնֆեդերացիայի և Ռուսաստանի նորարարական-տեխնոլոգիական կենտրոնների միության միջև: Կողմերի նպատակն է Հայաստանի, Ռուսաստանի և Բելառուսի միջև ստեղծել ընդհանուր տեխնոլոգիական և տեղեկատվական տիրույթ, որը կապահովի ՓՄՁ ոլորտի աջակցության համակարգի արդյունավետ գործունեությունը: Կողմերը նաև պայմանավորվել են մշակել Եվրասիական տնտեսական միության դրույթներին համապատասխան գործունեության կարգավորման և համակարգման միասնական դիրքորոշում: Հայաստանի, Բելառուսի և Դաշնության ՓՄՁ աջակցության կառույցները նաև գործակցելու են ՓՄՁ ոլորտի աջակցության մեխանիզմների կատարելագործման և զարգացման, նորարարական ձեռնարկությունների արտադրանքի միջազգայնացման հարցում:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացման, մարզային մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման ուղղությամբ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են Բելգիայում, Մոլդովայում, Ուկրաինայում, Հյուսիսային Իռլանդիայում, Գերմանիայում, Չինաստանում, Ռուսաստանում, Սլովակիայում և Բելառուսում կազմակերպված մի շարք դասընթացների, համաժողովների և հանդիպումների:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագրի միջոցներով Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի տեխնիկական հնարավորությունների զարգացման նպատակով ձեռք է բերվել համակարգչային և գրասենյակային տեխնիկա:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)

2.1 Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի նպատակն է մրցունակ ՓՄՁ-ների հիմնումը Հայաստանում: Ծրագիրը ներառում է ուսուցողական, մասնագիտական խորհրդատվության, տեղեկատվական, ինչպես նաև ֆինանսական աջակցության տրամադրման բաղադրիչներ: Մասնակցելով ծրագրին՝ սկսնակ գործարարները ստանում են բիզնեսի պլանավորման, շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ: Ծրագրի դասընթացային փուլի տևողությունը 1 ամիս է, որի ընթացքում փորձառու մասնագետների ուղղորդմամբ սկսնակ գործարարները նախ մշակում են իրենց անհատական գործարար ծրագրերը, որից հետո ձեռնամուխ են լինում դրանց իրականացմանը: Այս ծրագիրն ավելին է քան գործարար ծրագիր մշակելը, այն գործարար մտածողության և վարքագծի հիմնարար սկզբունքները սահմանող գործիքակազմ է: Ծրագիրը սկսվում է ձեռնարկատիրության հաջող մեկնարկի համար

անհրաժեշտ հմտությունների զարգացմամբ և գիտելիքների փոխանցմամբ՝ գործարար ծրագրեր ներկայացնելու տրամաբանական ավարտով:

Գաղափարն իրագործելու ընթացքում գործարարները միայնակ չեն. դասընթացային փուլին հաջորդող 6 ամիսների ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի փորձագետները և բիզնես խորհրդատուները ուղեկցում են սկսնակ գործարարներին անհատական խորհրդատվությունների միջոցով և լրացուցիչ աջակցություն տրամադրում՝ կարիքներից ելնելով:

2016 թվականի ընթացքում իրականացվել է 10 ծրագիր¹ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան, Տավուշի մարզի Իջևան և Դիլիջան, Շիրակի մարզի Գյումրի, Լոռու մարզի Վանաձոր, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Արարատի մարզի Արտաշատ, Արագածոտնի մարզի Աշտարակ, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքներում, ինչպես նաև Լոռու մարզի Օձուն գյուղում: Ընդհանուր առմամբ նշված 10 վայրերում ծրագրերին մասնակցելու համար դիմել է 307 սկսնակ գործարար, հարցազրույցների արդյունքում ընտրվել և մասնակցել է ծրագրերին 152-ը (99-ը՝ կին, 53-ը՝ տղամարդ) (Հավելված 2.1): Արդյունքում, 152 մասնակիցներից 127-ը կազմել և ներկայացրել են գործարար ծրագրեր:

	Մարզ քաղաք/գյուղ	Մասնակիցների թիվ	Դասընթացի սկիզբ/ավարտ	Ներկայացված գործարար ծրագրեր
1	Շիրակ /Գյումրի	23	06.06.2016- 09.07.2016	15
2	Արագածոտն /Աշտարակ	14	18.07.2016- 24.08.2016	13
3	Գեղարքունիք /Սևան	15	23.06.2016- 28.07.2016	12
4	Լոռի/ Օձուն	11	25.07.2016- 23.08.2016	11
5	Տավուշ /Իջևան	14	16.06.2016- 18.07.2016	10
6	Տավուշ /Դիլիջան	11	13.09.2016- 13.10.2016	11
7	Վայոց Ձոր /Եղեգնաձոր	15	13.09.2016- 27.10.2016	15
8	Լոռի/Վանաձոր	14	26.10.2016- 03.12.2016	10
9	Կոտայք/Չարենցավան	22	05.10.2016- 28.11.2016	18
10	Արարատ/Արտաշատ	13	31.10.2016- 05.12.2016	12
	Ընդամենը	152		127

¹ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան, Արագածոտնի մարզի Աշտարակ, Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր, Կոտայքի մարզի Չարենցավան, Արարատի մարզի Արտաշատ քաղաքներում և Լոռու մարզի Օձուն գյուղում ծրագրերն իրականացվել են ԱՄՆ ՄԶԳ-ի Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID PRP) համատեղ ծրագրի շրջանակներում: ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, Տավուշի մարզի Իջևան և Դիլիջան, Լոռու մարզի Վանաձոր քաղաքներում ծրագրերը իրականացվել են ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) «Արդյունավետ աշխատանք Հայաստանում երիտասարդների համար. երիտասարդ ձեռներեցիներին աջակցություն» համատեղ ծրագրի շրջանակներում:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականին «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի արդյունքում գրանցվել է 22 ՓՄՁ սուբյեկտ: Գրանցված ՓՄՁ սուբյեկտներից բոլորը գրանցվել են որպես անհատ ձեռնարկատերեր և ապահովում են 25 աշխատատեղ, որից 22-ը հանդիսանում են ինքնազբաղված, իսկ 3-ը ստեղծել են հավելյալ 2 աշխատատեղ: Պետական գրանցում ստացած սկսնակ գործարարների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 45%, ծառայությունների ոլորտում՝ 50%, առևտրի ոլորտում՝ 5% (*Հավելված 2.2*):

Բացի այդ, ս. թ. հուլիս-օգոստոս ամիսների Սևան Ստարտափ հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է «Սևան ստարտափ սամիթ 2016» խորագրով միջոցառումը: Միջոցառման նպատակն էր նորարարական, առաջադեմ և հեռանկարային գործարար գաղափարներ ունեցող ստարտափների զարգացումը և դրանց ֆինանսավորման համար հնարավորությունների ստեղծումը: Միջոցառմանը մասնակցել են շուրջ 40 ստարտափ թիմեր, որոնք վրանային ճամբարի սկզբունքով շուրջ մեկ շաբաթ անցկացրեցին Սևանա լճի ափին: Ծրագրի ողջ ընթացքում ինտենսիվորեն տեղի են ունեցել սեմինարներ, թրեյնինգներ, անհատական խորհրդատվություններ, մենթորային միջոցառումներ լավագույն մասնագետների մասնակցությամբ: Միջոցառման շրջանակներում պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվել պոտենցիալ ներդրողների և մասնակից թիմերի միջև՝ առաջարկվող գաղափարների համար հնարավոր ներդրումներ ստեղծելու նպատակով, բացի այդ կազմակերպվել են գործարար գաղափարների մրցումներ, որոնց հաղթողները ստացել են ֆինանսական դրամաշնորհներ:

Ս. թ. դեկտեմբերի 9-ին Ստեփանակերտում տեղի է ունեցել «StartUp Challenge for Artsakh» նորարարական բիզնես-գաղափարների մրցույթ-ակսելերացիոն ծրագրի եզրափակիչ փուլը: Ծրագիրը կազմակերպել էին «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ընկերությունը և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Արցախի մասնաճյուղը: Ներկայացված բիզնես ծրագրերը վերաբերում էին Արցախի տարբեր ոլորտների զարգացմանը, ինչպես օրինակ, աղբահանության խնդրի լուծմանը, ագրո-զբոսաշրջության ստեղծմանը, Ստեփանակերտի տրանսպորտային միջոցների տեղաշարժին, գյուղական համայնքներում ապրանքափոխանակման համակարգերի հիմնմանը, ֆինանսական հոսքերի կարգավորմանը, հագուստի և աքսեսուարների արտադրությանն ու առցանց վաճառքին, միջոցառումների մասին տեղեկատվության տրամադրմանը, սննդի փոխանակման հարթակներ ստեղծելուն և այլն:

2.2 ՓՄՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն

Ասիական զարգացման բանկի (ADB) «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում ս.թ. մարտին մեկնարկեց «Գործարար կանանց ուղղորդում» (Mentorship) ծրագիրը, որի շրջանակներում ս. թ. մարտի 15-16-ը Աղվերանում կազմակերպվեց մենթորության երկօրյա դասընթաց/խորհրդատվություն Երևանում և ՀՀ մարզերում գործող 16 կին ձեռներեցների համար, որոնցից 7-ը՝ փորձառու գործարար կանայք էին (mentors), իսկ 9-ը՝ սկսնակ գործարարներ (mentees): Դասընթացի հիմնական թեմաներն էին՝ մենթորության սահմանում, մենթորի նկարագիր, զրույցի անցկացում հարցերի միջոցով, հարցադրում և դրա տեխնիկա, խնդիրների արդյունավետ լուծում, մենթորի և մենթիի համագործակցության սկզբունքներ, մենթորության արդյունավետության գնահատում: Դասընթացի ավարտին մասնակիցները կազմեցին

մենթոր-մենթի զույգեր, միմյանց աջակցելու և համագործակցելու նպատակով դասընթացին հաջորդող վեց ամիսների ընթացքում (Հավելված 2.3):

Սույն թվականի հոկտեմբերի 24-ից մինչև նոյեմբերի 20-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրության աջակցություն» ծրագրի շրջանակներում Հբաղվածության պետական գործակալության կողմից ուղղորդված 43 անմրցունակ անձանց տրամադրվել է ձեռնարկատիրական գործունեություն իրականացման համար ուսուցում և անհատական խորհրդատվություն 10 օր տևողությամբ ՀՀ Արագածոտն, Արմավիր, Արարատ, Կոտայք, Սյունիք և Վայոց Ձոր մարզերում և քաղաք Երևանում: Ծրագրի արդյունքում ՓՄՁ ՀԱԿ-ի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի փորձագետների օգնությամբ կազմվել են գործարար ծրագրեր Հբաղվածության պետական գործակալության կողմից դրամաշնորհային ծրագրում ընդգրկվելու նպատակով:

ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) և Հայաստանի ՓՄՁ ՀԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագրերի շրջանակներում ՀՀ մի շարք մարզերում իրականացվել են տեխնոլոգիական դասընթացներ: Մասնավորապես, ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքում գործող 8 և ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում զբոսաշրջության ոլորտում գործող 14 գործարարների համար կազմակերպվել է «Հյուրատների կառավարում և հաճախորդների սպասարկում» թեմայով դասընթաց: Արարատի մարզի 11 սկսնակ գործարարների համար կազմակերպվել է դասընթաց/խորհրդատվություն «Ջերմոցային տնտեսություններում մշակաբույսերի աճեցման տեխնոլոգիաները» և «Ջերմոցային տնտեսությունների հիմնադրման/կառուցման աշխատանքները» թեմաներով: Արարատի մարզի Վեդի քաղաքում իրականացվել է «Պտուղ-բանջարեղենի չորացման պատշաճ արտադրական պրակտիկա և շուկայավարում» թեմայով դասընթաց 13 սկսնակ և գործող չրագործների համար: Տավուշի և Արարատի մարզերի 21 ջերմոցային տնտեսությունների համար կազմակերպվել է «Ջերմոցային տնտեսությունների արդյունավետ շահագործում և կառավարում» թեմայով տեխնոլոգիական դասընթաց (Հավելված 2. 4):

Ընդհանուր առմամբ ուսուցողական աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 278 ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներ, որոնցից 152-ը «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում:

Սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին այլ ուսուցողական աջակցություն

Գերմանական միջազգային համագործակցություն ընկերության (ԳՄՀԸ) «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում 2016թ-ին մեկնարկել է «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում ՄԿՈՒ ոլորտում» պիլոտային ծրագիրը, որի նպատակն է աջակցել ՄԿՈՒ քոլեջներին ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանն ուղղված մոդուլային ծրագրի մշակման և իրականացման գործընթացներում: Ծրագրի շրջանակներում ՓՄՁ ՀԱԿ-ի փորձագետների կողմից մշակվել է «Ձեռնարկատիրական հմտություններ» մոդուլ և փորձարկվել չորս ՄԿՈՒ հաստատություններում: Մասնավորապես, ՓՄՁ ՀԱԿ-ի փորձագետները իրականացրել են «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» թեմայով դասընթացավարների վերապատրաստման դասընթաց CEFE մեթոդաբանությամբ ՄԿՈՒ քոլեջների ուցուցիչների և ՄԿՈՒ ՀԱԿ-ի փորձագետների համար, որից հետո ՄԿՈՒ քոլեջներից վերապատրաստում անցած ուցուցիչների հետ

մոդուլը փորձարկվել է 4 քոլեջներում՝ Վայոց Ձորի Տարածաշրջանային պետական քոլեջ, Տավուշի Տարածաշրջանային պետական քոլեջ, Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական քոլեջ, Երևանի Ինֆորմատիկայի պետական քոլեջ: Հիմնվելով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պահանջների, տրամադրված ամանակահատվածի և մասնագիտական գիտելիքների վրա՝ Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի փորձագետները մշակել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում և գործարար ծրագրի կազմում» ուսումնական մոդուլ: Ընդհանուր առմամբ 4 քոլեջներից դիմորդների թիվը կազմել է 112, որոնցից հարցազրույցների արդյունքում ընտրվել և մասնակցել են ծրագրին 58 ուսանող:

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների փորձագետների կարողությունների զարգացման նպատակով ս.թ. նոյեմբերի 1-11-ը Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի և ուսուցողական գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների 20 աշխատակիցներ անցել են դասընթացավարների վերապատրաստման (TOT) մասնագիտական դասընթաց «Գիտելիքահեն տնտեսության կառուցում՝ ձեռնարկությունների ձևավորման ճանապարհով (CEFE) մեթոդաբանության կիրառում» թեմայով: Դասընթացի նպատակն էր զարգացնել փորձագետների հմտությունները, վերապատրաստել և ներգրավել «Սկսնակ գործարարներ ի ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի գործընթացին:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցություն (կարողությունների զարգացում)» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

3. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

Տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման և այլ ուղղություններով շուրջ 4300 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 8417 անգամ աջակցություն (այդ թվում՝ 64 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տեղեկատվական և խորհրդատվական բնույթի աջակցություն է տրամադրվել Հաշվապահական կենտրոնում գործող կազմակերպությունների մասնագետների կողմից):

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը Համաշխարհային բանկի խումբ հանդիսացող Միջազգային ֆինանսական կորպորացիայի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության Տեսչական բարեփոխումների խմբի հետ համատեղ ս.թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում մեկնարկել է իրազեկում-խորհրդատվություն հարկային օրենսդրությանն առնչվող հարցերի և տեսչական ստուգումների վերաբերյալ ՀՀ բոլոր մարզերում գործող ՓՄՁ ս սուբյեկտների համար: Հանդիպումների ընթացքում գործարարներին ներկայացվել են հարկային օրենսդրության վերջին փոփոխությունները, մասնավորապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտների հարկման

առանձնահատկությունները, «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունները, էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի, նոր սերնդի ՀԴՄ-ների ներդրման/կիրառման առանձնահատկություններ, ինչպես նաև տեսչական ստուգումների մանրամասները, մասնավորապես ռիսկի վրա հիմնված ստուգումներ, տնտեսավարողների իրավունքներն ու պարտականությունները: Հանդիպման վերջին մասը իրականացվել է հարց ու պատասխանի ձևաչափով, որի ընթացքում գործարարները ստացել են իրենց հարցերի պատասխանները:

Վերը նշված փոփոխությունների վերաբերյալ ՓՄՁ սուբյեկտներին իրազեկելու նպատակով ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում իրականացվել են 10 սեմինար-խորհրդատվություններ, որոնց ներկա են եղել 438 ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցիչներ (*Հավելված 3*): Սեմինարների ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է նշված փոփոխությունները պարզաբանող՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության Տեսչական բարեփոխումների խմբի կողմից մշակված և տպագրված տեղեկատվական նյութեր:

Սեմինարների ընթացքում հրավիրվել են տեղեկան լրատվական միջոցներ, որոնք լուսաբանել և տեղեկատվություն են տարածել նշված միջոցառումների բովանդակության վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կազմակերպվել են տարբեր քննարկումներ բիզնեսին աջակցող կառույցների և ծրագրերի ներկայացուցիչների հետ: Մասնավորապես, ՀՀ հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի, Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի, Համաշխարհային բանկի խումբ հանդիսացող Միջազգային ֆինանսական կորպորացիայի, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեի Ուսումնական կենտրոնի հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ ՀՀ հարկային օրենսգրքի իրազեկման աշխատանքներն համատեղ իրականացնելու ուղղությամբ:

Ս. թ. հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ԱՄՆ ՄՁԳ «Հարկային բարեփոխումների ծրագրի» (USAID TRP) հետ համատեղ կազմակերպել է 3 կլոր սեղան-քննարկումներ ՀՀ Կոտայքի, Լոռու և Վայոց Ձորի մարզերի գործարարների հետ: Հանդիպման ընթացքում գործարարներին ներկայացվել են «Հարկային բարեփոխումների ծրագրի» (USAID TRP) կողմից իրականացված Ձեռնարկատիրությանն խոչընդոտող խնդիրների վերաբերյալ հետազոտության արդյունքները, ինչպես նաև վերհանվել են առկա խնդիրները, որոնք հիմանականում վերաբերում էին հարկային վարչարարությանը և սննդի արտադրությունում առկա թույլտվություններին:

Ս.թ. սեպտեմբեր ամսին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը Համաշխարհային բանկի խումբ հանդիսացող Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ համատեղ կազմակերպել է 2 կլոր սեղան-քննարկումներ Երևան քաղաքում գործող ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն վարելուն խոչընդոտող առկա խնդիրները:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը մասնակցություն է ունեցել ՀՀ էկոնոմիկայի նախարարության և տարբեր գերատեսչությունների կողմից տրամադրված այլ իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրության և կարծիքների պարտաստման աշխատանքներին:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ներկայացուցիչը 2016թ. ապրիլի 13-16-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել է Սևծովյան տնտեսական համագործակցության (BSEC) շրջանակներում Ուկրաինայի Կիև քաղաքում տեղի ունեցած «ՓՄՁ-ները և կանաչ

տնտեսությունը» խորագրով աշխատաժողովին: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին BSEC-ի և Եվրամիության քաղաքականությունը և գործողությունները՝ ուղղված ՓՄՁ-ներում կանաչ տնտեսության պրակտիկայի արմատավորմանը, ինչպես նաև BSEC անդամ երկրների փորձը ՓՄՁ-ների և կանաչ տնտեսության վերաբերյալ, այդ թվում՝ Հայաստանի փորձը: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ներկայացուցիչը ներկայացրեց ՓՄՁ-ների և կանաչ տնտեսության հիմնախնդիրները Հայաստանում և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործունեությունը նշված բնագավառում: Հանդիպման արդյունքնում կազմվել է արձանագրություն, որտեղ ամփոփվել են կանաչ տնտեսության զարգացմանն ուղղված անդամ երկրների քաղաքականությունը, առկա ռազմավարական փաստաղթերը, ծրագրերը, նախատեսվող միջոցառումները, ինչպես նաև մշակվել են բոլոր անդամ երկրների համար ընդունելի առաջարկություններ, որոնք կուղարկվեն արդամ երկրների կառավարություններ:

Հաշվետու ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ աշխատանք է տարվել կենտրոնի գործունեությունը լուսաբանելու նպատակով: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը, բացի ընթացիկ նորություններից, իր կայքում շաբաթական պարբերականությամբ տեղադրում է իր շահառուների հաջողության պատմությունները:

Շարունակվել է Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործունեության մասին պատմող հեռուստածրագրի հեռարձակումը Հայկական երկրորդ հեռուստաալիքով: Թողարկվել և հեռարձակվել է 9 հեռուստածրագիր: 10-րդ ծրագիրը նախատեսվում է հեռարձակել 2016թ. դեկտեմբերի վերջին: 2016թ. առաջին թողարկումը նվիրված է եղել Արարատի մարզում իրականացված ծրագրերին, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի շահառուների հաջողության պատմություններին, ընթացիկ միջոցառումներին, սպասվող որոշ իրադարձություններին: Երկրորդ ծրագիրը պատմել է Արմավիրի, երրորդը՝ Տավուշի, չորրորդը՝ Արագածոտնի, 5-րդը՝ Լոռու մարզային մասնաճյուղերի, ինչպես նաև ընթացիկ միջոցառումների մասին, ներկայացվել են նաև Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի շահառու գործարարների հաջողության պատմությունները: 6-րդ ծրագիրը նվիրված է եղել Գեղարքունիքի մարզը ներկայացնող հաջողակ գործարարների պատմություններին, ինչպես նաև հունիս-հուլիս ամսվա ընթացքում իրականացված միջոցառումներին: Ըստ պայմանագրի՝ ծրագիրը մեկամսյա դադար է վերցրել օգոստոս ամսվա ընթացքում՝ հաշվի առնելով արձակուրդային սեզոնը և դիտելիության անկումը: Սեպտեմբերին հեռարձակված 7-րդ ծրագիրը նվիրված է եղել Շիրակի մարզին: Հոկտեմբերի թողարկումը պատմել է Սյունիքի մարզի՝ ՓՄՁ ՋԱԿ-ի շահառու հաջողակ գործարարների մասին, ներկայացվել են նաև անցած ամսվա ընթացքում կազմակերպված միջոցառումները: Նոյեմբերի թողարկման համար նկարահանվել և ցուցադրվել են Վայոց Ձորի մարզում գործող հաջողակ բիզնեսներից մի քանիսը, ինչպես նաև ներկայացվել է Կենտրոնի գործունեության ամփոփումը: Տարվա վերջին՝ 10-դ թողարկումը նվիրված է Կոտայքի մարզին: Ներկայացվել են նաև Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ղեկավարության և մասնագետների մասնակցությամբ իրականացված միջոցառումները: Ծրագրերն արդեն տեղադրվել և հասանելի են ՓՄՁ ՋԱԿ-ի ՅուԹյուբ ալիքում (<https://www.youtube.com/user/SMEDNCArmenia>):

Բացի հեռուստահաղորդումներից, ՋԼՄ-ներով բազմիցս ներկայացվել են Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործադիր տնօրենի հարցազրույցները, տեղեկություններ, նյութեր և հոդվածներ ՓՄՁ ոլորտի խնդիրների և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի գործունեության վերաբերյալ:

Կայքերով լայնորեն լուսաբանվել է Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի տնօրենի և Ռուսաստանի ՓՄՁ զարգացման կորպորացիայի ղեկավարի միջև կնքված հուշագիրը, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ- Ստարտափ Արմենիա հիմնադրամի միջև ստորագրված

հուշագիրը, Բելառուսի, Ռուսաստանի ՓՄՁ աջակցության կառույցների և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի միջև հուշագրեր ստորագրումը, տնօրենի մասնակցությունը միջազգային միջոցառումներին նույնպես լուսաբանվել են լրատվամիջոցներով:

Լրատվամիջոցները լուսաբանել են նաև ՓՄՁ ՋԱԿ-ի և գործընկեր կազմակերպությունների համատեղ ծրագրերի շրջանակում կազմակերպված միջոցառումները:

Կազմակերպվել է JICA-ի և Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի համատեղ ծրագրի առաջին փուլի ամփոփիչ միջոցառումը: Այն նույնպես լայնորեն լուսաբանվել է լրատվամիջոցներով և ՓՄՁ ՋԱԿ-ի ծրագրի շրջանակում: Հաշվետու ժամանակահատվածում լուսաբանվել է սիրիահայ գործարարներին ընդունելու, նրանց խնդիրները ևս մեկ անգամ լսելու և քննարկելու հետ կապված միջոցառումը, նոր գյուղտեխնիկայի տրամադրումը, գործադիր տնօրենի հանդիպումները միջազգային և տեղական գործընկերների հետ, Արարատի և Վայոց Ձորի ընտրված համայնքների տեղական տնտեսությունների վերլուծության արդյունքների ամփոփումը, նաև ՀՀ վարչապետի՝ Լավազոյն կին գործարար 2016թ. մրցանակաբաշխության հայտերի ընդունման հրավերը:

2016թ. հունիսի 29-ին Երևանի Ռեդիսոն Բլու հյուրանոցում կայացել է ՀՀ վարչապետի «Լավազոյն կին գործարար» 2016թ. մրցանակաբաշխությունը: Վարչապետի անունից մրցանակներ է հանձնել ՀՀ փոխվարչապետը: Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի տնօրենը հանձնել է հատուկ մրցանակ՝ Արցախից ընտրված 2 կին գործարարի: Ընդհանուր առմամբ, անցած տարիների նման, Հայաստանի էլեկտրոնային լրատվամիջոցները լայնորեն լուսաբանել են միջոցառումը՝ ռեպորտաժների, հոդվածների, ֆոտոշարքերի միջոցով: Ռեպորտաժներ են հայտնվել Հանրային, Արմենիա, Հ2, Շանթ, Երկիր մեդիա, հեռուստաընկերությունների եթերով և բազմաթիվ այլ էլեկտրոնային և հեռարձակվող լրատվամիջոցներով:

Լայն լուսաբանում է ստացել «Արտադրված է Հայաստանում» 2016թ ցուցահանդեսը: Միջոցառման մասին պատմող տեսանյութն ընդգրկվել է նաև ՓՄՁ ՋԱԿ-ի սեպտեմբեր ամսվա հեռուստածրագրի մեջ: Լուսաբանվել են նաև «Արմպրոդէքսպո», «Բերքի փառատոն 2016», «Հայաստան-Ռուսաստան-Իրան» 2016թ. ցուցահանդեսը, որոնց նույնպես ակտիվորեն մասնակցել է ՓՄՁ ՋԱԿ-ը:

«Արմենպրես» գործակալության հետ արդյունավետ գործընկերության հիման վրա Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի հասարակության հետ կապերի բաժինը գործակալությանն է տրամադրում Հայաստանում բիզնես նախաձեռնած և հաջողության հասած գործարարների մասին պատմող պրոֆեսիոնալ լրագրողական հոդվածներ, իրադարձությունների մասին պատմող տեղեկություն:

Համապատասխան պայմանավորվածության շրջանակում շարունակվում է գոծակցությունը tert.am և news.am կայքերի հետ: Այդ կայքերում նույնպես պարբերաբար լուսաբանվում է ՓՄՁ ՋԱԿ-ի գործունեությունը: Յուրաքանչյուր միջոցառումից հետո Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կայքին զուգահեռ հոդվածները հայտնվում են նաև Արմենպրես, Պանորամա, Ի-մեդիա և այլ կայքերում, Արմնյուզ և Արմենիա, Հանրային հեռուստաընկերությունները ռեպորտաժներ են հեռարձակել Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ծրագրերի շրջանակում իրականացվող միջոցառումների մասին:

Շարունակում է ակտիվորեն գործել Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի ֆեյսբուքյան էջը: Այն օգնում է երկխոսություն ծավալել շահառուների և կենտրոնի միջև: Ֆեյսբուքին զուգահեռ և կենտրոնի ֆեյսբուքյան էջի հետ համընթաց (սինխրոնացված) գործում է նաև կենտրոնի էջը twitter սոցիալական ցանցում: Յուրաքանչյուր վիդեո-սոցիալական ցանցում

կենտրոնը 2012թ.-ից սկսած՝ տեղադրում և ներբեռնում է իր գործունեության հետ կապ ունեցող տեսանյութեր:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով «ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

4. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

4.1 ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)

2016թ. ընթացքում «Վարկերի դիմաց Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից երաշխավորությունների տրամադրում» ծրագրի շրջանակներում ՀՀ Արարատի մարզում գործող <ՍՄԱԶՈՆԻՏ> ՍՊԸ-ին տրամադրվել է 14.9 մլն ՀՀ դրամ գումարի երաշխավորություն՝ ապահովելով 14.9 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Տրամադրված վարկերի տոկոսադրույքը կազմել է 13%, վարկային պարտավորության երաշխիքով ապահովվածությունը կազմել է 63.45%: Վարկային երաշխավորությունը տրամադրվել է ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ-ի միջոցով:

4.2 Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն (վարկային երաշխավորությունների տրամադրում)

2016թ. ընթացքում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն են ստացել 17 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է 69.4 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 71.3 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով (Հավելված 4):

Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 4.2 մլն ՀՀ դրամ, ստացված վարկային միջոցների միջին գումարը՝ 4.1 մլն ՀՀ դրամ:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի

Մարզ	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Երևան	2	10,000,000	10,208,324
Սյունիք	1	5,000,000	5,151,040
Կոտայք	2	3,000,000	3,090,624
Վայոց Ձոր	3	14,746,800	15,167,095
Լոռի	1	4,800,000	4,936,804
Արագածոտն	2	9,928,164	10,211,124

Արարատ	1	4,900,000	5,039,654
Տավուշ	1	3,000,000	3,085,502
Արմավիր	2	9,500,000	9,770,757
Գեղարքունիք	2	4,500,000	4,628,253
Ընդամենը	17	69,374,964	71,289,177

Ընդհանուր առմամբ, ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 18 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներ:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով «ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

5. Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսների աջակցություն

Հաշվետու ժամանակահատվածում, ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակներում, համայնքների տնտեսական ներուժի բացահայտման ուղղությամբ «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» է իրականացվել 5 համայնքային խմբերում (կլաստեր): Բացահայտվել են տնտեսական և ենթակառուցվածքային 82 նախաձեռնություններ:

Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում				
h/ h	Մարզ	Իրականացման վայրը /համայնքները կլաստերում/	Իրականացման ժամանակա հատվածը	Բացահայտված նախաձեռնություն ների քանակ
1	Արարատ	Դվին, Վերին Դվին, Նորաշեն, Հնաբերդ, Ներքին Արտաշատ	Փետրվար 2016	17
2	Վայոց Ձոր	Վերնաշեն, Գլաձոր	Մարտ 2016	14
3	Լոռի	Օձուն, Արդվի, Այգեհատ	Մայիս 2016	19
4	Արագածոտն	Շենավան, Արագած, Հարթավան, Ափնա, Արայի	Հունիս 2016	17
5	Շիրակ	Փանիկ, Գետափ, Մեղրաշեն, Անուշավան	Հուլիս 2016	15

Ենթակառուցվածքային ծրագրերից իրականացվել են՝

- «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի» (ԱԳԶԿ) հետ համագործակցությամբ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի

մարզի Արագածավան և Կոտայքի մարզի Նոր գյուղ համայնքներում հիմնվել են Գյուղատնտեսական և Անասնաբուժական Սպասարկման Կենտրոններ (ԳԱՍԿ):

- «ՀՀ Կոտայքի մարզի Բջնի համայնքի ոռոգման համակարգի նոր խողովակաշարի տեղադրման» ծրագրի շինարարական աշխատանքները:
- «ՀՀ Տավուշի մարզի Զորական գյուղական համայնքի Սարիթաղ թաղամասի ոռոգման համակարգի վերակառուցման» ծրագրի շինարարական աշխատանքները:
- «ՀՀ Լոռու մարզի Կուրթան գյուղական համայնքի հացահատիկի գտման կենտրոնի կառուցման» ծրագրի շինարարական աշխատանքները:
- «ՀՀ Տավուշի մարզի Կողբ համայնքի ոռոգման համակարգի վերակառուցման» ծրագրի շինարարական աշխատանքները:
- «ՀՀ Տավուշի մարզի Ենքավան գյուղական համայնքի տարածքում գտնվող տուրիզմի զարգացման կենտրոնի հիմնադրման աջակցության» ծրագրի շինարարական աշխատանքները:
- ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքում հիմնված՝ խոտաբույսերի հավաքման, սորտավորման և փաթեթավորման կենտրոնի, անհրաժեշտ սարքավորումների և գույքի տրամադրման աշխատանքները:
- Ենթակառուցվածքային ծրագրերի շրջանակում՝ սոխի, արևածաղկի և եգիպտացորենի ցանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով համայնքների համաֆինանսավորմամբ մեկական ճշգրիտ ցանքի սերմնացան է տրամադրվել Զորական և Բագրատաշեն համայնքներին:

Հաշվետու ժամանակահատվածում, ծրագրի շահառուների գործարար և տեխնոլոգիական կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են նաև ոլորտային ուղղվածություն ունեցող դասընթացներ (*մանրամասները ներկայացված են 2.2 բաժնում, Հավելված 2.4*):

Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում՝ նյութեր և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով: Դրամաշնորհները տրամադրվում են համաձայն հաստատված ընթացակարգի: Դրամաշնորհի կարող են հավակնել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրին մասնակցած, ոլորտային աջակցության ծրագրերի կողմից խրախուսվող ոլորտներից որևէ մեկին համապատասխան առավել իրատեսական գործարար ծրագրեր մշակած և ներկայացրած, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված անհատ ձեռնարկատերերն ու իրավաբանական անձինք: Հաշվետու ժամանակահատվածում սարքավորումների/նյութերի ձևով դրամաշնորհներ են տրամադրվել 11 ՓՄՁ սուբյեկտների (*Հավելված 5*): Մինչ դրամաշնորհ ստանալը, նշված 11 ՓՄՁ սուբյեկտներից մասնաթերքի արտադրությամբ զբաղվող 1 և պանրի արտադրությամբ զբաղվող 4 սկսնակ գործարարների համար կազմակերպվել է նաև անհատական խորհրդատվություն, որի ընթացքում խորհրդատուի կողմից տրամադրվել է բազմաբովանդակ տեսական և գործնական ուսուցում կաթի վերամշակման սանիտարահիգիենիկ պահանջների և պանրի, ինչպես նաև մասնաթերքի արտադրության տեխնոլոգիաների վերաբերյալ, իսկ հյուրատնային գործունեությամբ զբաղվող 6 գործարարները մասնակցել են «Հաճախորդների սպասարկում» և «Հյուրատների կառավարում» թեմաներով դասընթացներին:

Հաշվետու ժամանակահատվածում «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ի հետ մշակվել և տպագրվել են «Զբոսաշրջային տան կառավարման (B&B) գործարար մոդել/ուղեցույց»-ը, «Ապրանքային նշանների գրանցման ուղեցույց»-ը, որտեղ ներկայացված են ապրանքային նշանի գրանցման համար իրականացվող գործընթացների գործնական քայլերը և անհրաժեշտ մանրամասները, «Թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման գործարար ուղեցույց»-ը:

Ընդհանուր առմամբ՝ իրականացվել է 10 ենթակառուցվածքային ծրագիր, 2017 թվականի իրականացման համար հաստատվել է ենթակառուցվածքային 5 ծրագիր: «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» է իրականացվել 5 համայնքային խմբերում (կլաստեր), բացահայտվել են տնտեսական և ենթակառուցվածքային 82 նախաձեռնություններ: Դրամաշնորհ են ստացել 11 ձեռնարկատերեր: Մշակվել և տպագրվել են 1 տեխնոլոգիական և 2 գործարար ուղեցույցներ:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով «Տեղական տնտեսական զարգացում և ոլորտային բիզնեսների աջակցություն» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

6. Կանանց ձեռներեցությանն աջակցություն

Ասիական զարգացման բանկի (ADB) «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Գործարար կանանց ուղղորդում» (Mentorship) ծրագիրը (մանրամասները ներկայացված են 2.2 ՓՄՁ բաժնում, Հավելված 2.3): Ծրագրի արդյունավետությունը գնահատելու և արդյունքները ամփոփելու նպատակով հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացվեց մոնիթորինգ: Մասնակիցներն իրենց գոհունակությունն արտահայտեցին և բարձր գնահատեցին ձեռք բերած գիտելիքները և հմտությունները բիզնեսի զարգացման, կառավարման և մարքեթինգի վերաբերյալ, ինչպես նաև նոր գործարար կապերը: Մոնիթորինգի արդյունքները հիմք կհանդիսանան Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող աջակցության ծրագրերի արդյունավետության գնահատման և հետագա ծրագրերում ուղղորդման գործիքակազմի օգտագործման համար:

ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախաձեռնողության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գործարարների նվաճումներն ըստ արժանավոյն գնահատման, հանրահռչակման և սատարման նպատակով իրականացվել է «Լավագույն կին գործարար» 2016 թվականի մրցանակաբաշխությունը՝ 6 անվանակարգերով. «Լավագույն կին գործատու», «Լավագույն կին նորարար», «Կին գործարարի լավագույն ապրանքանիշ», «Լավագույն երիտասարդ կին գործարար», «Լավագույն սկսնակ կին գործարար» և «Լավագույն արտահանող կին գործարար»: Ս.թ. ապրիլ-մայիս ամիսներին մշակվել է մրցանակաբաշխության անցկացման հայեցակարգը, հայտաձևերը ըստ անվանակարգի և հայտարարությունը: Մայիսի 4-ին հայտարարությունը և համապատասխան տեղեկատվությունը տեղադրվել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի, ինչպես նաև մի շարք լրատվամիջոցների կայք-էջերում և սոցիալական ցանցերում: Իրականացվել են հայտերի

հավաքագրման, միջազգային կառույցների ներգրավման, հայտերի ամփոփման, տեղեկատվության ճշգրտման, մշակման և հայտատուների նախնական ընտրության աշխատանքները՝ նախապես սահմանված չափորոշիչների: Մրցանակաբաշխությանը ներկայացվել է մասնակցության 139 հայտ, որոնցից 38-ը՝ Երևանից և 101-ը՝ ՀՀ մարզերից: Մրցույթն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, ինչպես նաև ելնելով մրցանակաբաշխության անցկացման կարգի համապատասխան դրույթներից՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից հավաքագրվել են բոլոր հայտերը, մշակվել, վերլուծվել և ներկայացվել մրցութային հանձնաժողովի անդամներին նախնական ընտրության: Մրցանակաբաշխության արդյունքները ամփոփվել են ս.թ. հունիսի 15-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության նիստերի դահլիճում կազմակերպված մրցութային հանձնաժողովի նիստի ընթացքում:

Հունիսի 29-ին «Ռեդիսոն Բլու» հյուրանոցում կայացած հանդիսավոր միջոցառման ընթացքում ՀՀ վարչապետի անունից մասնակիցներին ողջունեց և մրցանակաբաշխության 12 հաղթողներին (6-ը՝ Երևանից և 6-ը՝ ՀՀ մարզերից) մրցանակներ հանձնեց ՀՀ փոխվարչապետը: Խրախուսական մրցանակներ են շնորհել նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը՝ առաջին անգամ մրցանակներ շնորհվելով Արցախի 2 լավագույն կին գործարարներին: Խրախուսական պատվոգրեր, նվերներ և մրցանակներ հանձնեցին 26 կին գործարարների նաև միջազգային մի շարք կազմակերպություններ՝ ԱՄՆ ՄԶԾ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիրը (USAID PRP), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) և նրա կողմից իրականացվող «Երիտասարդ ձեռներեցիներին աջակցություն» ծրագիրը, Ասիական զարգացման բանկի (ADB) «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագիրը, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը (UNHCR), Վերակառուցման զարգացման եվրոպական բանկի «Փոքր բիզնեսի աջակցություն Հայաստանում» (EBRD ASB) ծրագիրը և Գործարարության աջակցության գրասենյակը (EBRD BSO), ԵԱՀԿ երևանյան գրասենյակը (OSCE), ինչպես նաև «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (AYWA) և այլ: Մրցանակաբաշխության ավարտից հետո շրջանակներում կազմակերպվել է տեղեկատվական/խորհրդատվական բնույթի միջոցառում «Կին գործարարների մարտահրավերները» խորագրով, որին մասնակցել են 40 կին գործարար (ներառված է տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ցուցանիշում): Քննարկման ընթացքում մասնակիցները բարձրաձայնել են բոլոր առկա խնդիրները և խոչընդոտները որոնց բախվում են գործունեության ընթացքում, ինչպես նաև առաջարկություններ են արվել այդ խնդիրների լուծման համար գործարար աջակցման նոր գործիքներ և մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ: Նրանց բոլոր առաջարկությունները ամփոփվել են հաշվետվության տեսքով, որը ուղեցույց կհանդիսանա ՓՄՁ ԶԱԿ-ի համար միջազգային կառույցների հետ համատեղ նոր ծրագրերում ներառելու նպատակով

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

7. Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում

Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցությունը և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովումն իրականացվում է հիմնականում Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության շրջանակներում, ինչպես նաև ՓՄՁ միջազգայնացմանն ուղղված այլ միջոցառումների շրջանակներում:

ՓՄՁ միջազգայնացմանն աջակցություն Ձեռնարկությունների Եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցը (ՁԵՑ) Եվրոպական նախաձեռնություն է, որի նպատակն է գործարարությանն ու նորարարությանն ուղղված աջակցություն տրամադրել ձեռնարկություններին Եվրոպայում և Եվրոպայից դուրս: ՁԵՑ-ի ընդհանուր համակարգումն իրականացվում է Եվրոպական Հանձնաժողովի ՓՄՁ հարցերով գործադիր գործակալության (EASME) կողմից:

ՁԵՑ-ի գործունեությունը Հայաստանում իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի (համակարգող) և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (գործընկեր) կողմից: Հայկական կոնսորցիումը նշված EASME գործակալության հետ ստորագրել է շրջանակային համաձայնագիր 2015-2020թթ. համար: Սկսած 2016թ. ՁԵՑ-ի աշխատանքները Հայաստանում համաֆինանսավորվում են Եվրոպական Հանձնաժողովի կողմից՝ COSME ծրագրին Հայաստանի անդամակցության շնորհիվ:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և գործարարների շրջանում տարածվել է Հայաստանում ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային նորությունների ամսական տեղեկաթերթի 12 նոր համար՝ անգլերեն և հայերեն լեզուներով, որոնց հասցեատերերի քանակը գերազանցում է 3000-ը: Տեղեկաթերթը պարունակում է տեղեկատվություն հաղորդակցման կենտրոնի գործունեության, գործարար և տեխնոլոգիական համագործակցության առաջարկների և արտերկրում նախատեսվող գործարար միջոցառումների վերաբերյալ: Բացի այդ, մշակվել և հայ գործարարների շրջանում տարածվել է նաև «Միջազգային գործարար համագործակցության միջոցառումներ» խորագրով տեղեկաթերթի 4 համար, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն արտերկրներում տեղի ունեցող միջոցառումների մասին: Այս տեղեկաթերթի հասցեատերերի քանակը ևս գերազանցում է 3000-ը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են նաև ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացմանն ու մրցունակության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, 2016թ.-ի մայիս-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, ՀՀ Արարատի մարզի Արտաշատ և Երևան քաղաքներում կազմակերպվել են 8 տեղեկատվական միջոցառումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ոչ միայն ՁԵՑ գործիքները, այլև Հայաստանի արտահանման և ներմուծման ընթացակարգերը, ԵՄ կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերը, որոնք ուղղված են Հայաստանում ՓՄՁ ոլորտի աջակցմանը: Հանդիպումների ընթացքում Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ներկայացուցչի կողմից ներկայացվել է ԵՄ արտոնությունների ընդհանրացված (GSP+) համակարգը, ինչպես նաև ԵՄ արտահանման տեղեկատուն (Export help desk): Բացի այդ, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի ներկայացուցչի կողմից ՓՄՁ սուբյեկտներին է ներկայացվել համաֆինանսավորման սկզբունքով գործարար խորհրդատվության տրամադրումը տարատեսակ ոլորտներում:

Գերմանական տնտեսական միավորման ներկայացուցիչը ներկայացրել է միավորման կողմից մատուցվող ծառայությունները: Գործարար աջակցության ծառայություններ մատուցող շահագրգիռ կազմակերպությունների կողմից ներկայացվել է արտահանման ռազմավարությունը և այլ թեմաներ: Նշված 8 միջոցառումներին ապահովվել է 82 ՓՄՁ սուբյեկտների և գործարար աջակցություն տրամադրող 26 կառույցների ներկայացուցիչների մասնակցությունը (*Հավելված 6.2*):

Ս.թ. մայիսի 27-29-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՁԵՑ-ի շրջանակներում հանդես է եկել որպես «Շինարարություն և ինտերիեր» ցուցահանդեսի շրջանակներում կայացած գործարար հանդիպումների կազմակերպիչ: Գործարար հանդիպումներին մասնակցել են 13 հայկական ընկերություններ, որոնք ընդհանուր առմամբ հանդիպել են 3 ռուսական ընկերությունների հետ: Հանդիպումների համակարգման կերպիչ է հանդես եկել Ռուսաստանի փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության գործակալությունը:

Ս.թ. սեպտեմբերի 15-17-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՁԵՑ-ի շրջանակներում հանդես է եկել որպես Երևանում տեղի ունեցող «Արտադրված է Հայաստանում 2016» ցուցահանդեսի շրջանակներում կայացած գործարար հանդիպումների կազմակերպիչ: Գործարար հանդիպումներին մասնակցել են 6 հայկական ընկերություններ, որոնք ընդհանուր առմամբ հանդիպել են 3 ընկերությունների հետ՝ Հունաստանից, Կիպրոսից և Իրաքից:

Ս.թ. հոկտեմբերի 26-28-ը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ՁԵՑ-ի շրջանակներում հանդես է եկել նաև որպես Երևանում տեղի ունեցող «Ռուսաստան-Հայաստան-Իրան 2016» ցուցահանդեսի շրջանակներում կայացած գործարար հանդիպումների կազմակերպիչ: Գործարար հանդիպումներին մասնակցել են 5 հայկական ընկերություններ, որոնք ընդհանուր առմամբ հանդիպել են ռուսական 7 ընկերությունների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ են այցելել Ռուսաստանի Դաշնության Նորարարական տեխնոլոգիական կենտրոնի միության ՁԵՑ Ռուսաստանի ներկայացուցիչները, որոնց հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հետ հետագա հնարավոր համագործակցությունը՝ փոքր և միջին ձեռնարկությունների միջազգայնացման բնագավառում (հնարավոր գործարար միսիաների, գործարար համագործակցության հաստատման միջոցառումների և այլնի կազմակերպում):

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ են այցելել նաև Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի ձեռնարկատիրության աջակցության հիմնադրամի ներկայացուցիչները, որոնց հետ հանդիպման ընթացքում քննարկվել են հետագա համատեղ հնարավոր ծրագրերը (մասնավորապես գործարար այցերի և գործարար համագործակցության հաստատման միջոցառումների կազմակերպում և այլն):

2016թ. հունիսի 3-ին Գերմանիայի Վիսբադեն քաղաքի Hessen Trade & Invest GmbH ՁԵՑ գործընկեր կառույցի աշխատակիցների հետ հանդիպում է ունեցել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատակիցը: Հանդիպման ընթացքում գերմանացի և հայ աշխատակիցների միջև փորձի փոխանակում է տեղի ունեցել ՁԵՑ-ի շրջանակներում բիզնեսներին տրամադրվող աջակցությունների մեխանիզմների վերաբերյալ:

Ս.թ. հունիսի 17-ին համագործակցության հուշագիր է կնքվել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և Ռուսաստանի Դաշնության ՁԵՑ գործընկեր «Յուգրայի փոքր և միջին ձեռնարկատիրության արտահանմանն ուղղված սուբյեկտների աջակցման կոորդինացման կենտրոն» հիմնադրամի միջև: Ի թիվս ձեռք բերված այլ համաձայնությունների, համաձայն Հուշագրի, կողմերը պարտավորվում են փոխհամագործակցել Հայաստանի և Խանտի-Մանսիյսկի՝ Յուգրա ինքնավար մարզի

փոքր և միջին ձեռնարկատերերի միջև համագործակցության աջակցության տրամադրման ուղղությամբ:

2016թ. նոյեմբերի 18-ին Բելառուսի Մինսկ քաղաքում կայացել է ՁԵՑ-Հայաստան, ՁԵՑ-Ռուսաստան և ՁԵՑ-Բելառուս աշխատակիցների հանդիպումը, որի ընթացքում հայ, ռուս և բելառուս աշխատակիցների միջև փորձի փոխանակում է տեղի ունեցել, ինչպես նաև քննարկվել են հետագա համագործակցության հնարավորությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՓՄՁ-ների միջազգայնացման կարողությունների և ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի (ՁԵՑ) կողմից առաջարկվող ծառայությունների նկատմամբ կարիքների գնահատման ուսումնասիրություն: Ուսումնասիրության համար ընտրվել են 300 ՓՄՁ սուբյեկտներ՝ ներառյալ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ներկայացված շահառուները: Ընտրանքում ընդգրկվել են ՓՄՁ սուբյեկտներ ՀՀ բոլոր մարզերից, որոնք հիմնականում գործում են արտադրության ոլորտում: Արդյունքները համադրվել են ԵՄ-28 երկրներում իրականացված համանման ուսումնասիրության արդյունքների հետ: Ուսումնասիրությունը հնարավորություն տվեց վերհանել ՓՄՁ-ների միջազգայնացման փորձառությունը, արտահանման/ներմուծման շուկաները և արտահանման տեսակարար կշիռը շրջանառության ընդհանուր ծավալներում, միջազգայնացման հետ կապված ՓՄՁ-ների հիմնական դժվարությունները, միջազգայնացմանը նպաստող աջակցության հիմնական պահանջված ուղղությունները, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՁԵՑ շրջանակներում առաջարկվող ծառայությունների նկատմամբ կարիքները: Նշված հետազոտությունը մեծապես կնպաստի Հայաստանի ՓՄՁ-ների ՁԵՑ-ի կողմից տրամադրվող ծառայություններին տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, շահառուների առավել լայն շրջանակների ներգրավմանը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի գործունեության շրջանակներում 2016 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ աջակցություն է տրամադրվել 193 ՓՄՁ սուբյեկտներին, այդ թվում՝ 26 ՓՄՁ սուբյեկտների գործարար նկարագրեր տեղադրվել են ՁԵՑ-ում (*Հավելված 6.1*), 82-ը՝ ԵՄ արտահանման գործիքների վերաբերյալ կազմակերպված հանդիպումների մասնակիցներն են (*Հավելված 6.2*), 77 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել են տարբեր տեսակի աջակցություններ, այդ թվում՝ տեղադրվել են հարցումներ ՁԵՑ-ում, ուղարկվել են հետաքրքրության առաջարկներ և ստացված կոնտակտները ներկայացվել են տեղական ընկերություններին, ստացվել են հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները, մասնակցել են բիզնեսի միջազգայնացման տեղեկատվական միջոցառումներին, մասնակցել են «Շինարարություն և ինտերիեր», ինչպես նաև «Արտադրված է Հայաստանում 2016» և «Ռուսաստան-Հայաստան-Իրան 2016» ցուցահանդեսների շրջանակներում կազմակերպված գործարար հանդիպումներին, ստացել են անհատական խորհրդատվություն, ինչպես նաև *8 հայկական ընկերություններ համագործակցության համաձայնագրեր են կնքել Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի անդամ երկրներում (այդ թվում՝ Լատվիա, Նորվեգիա, Բուլղարիա, Իսպանիա, Ֆրանսիա և այլն) գործող ընկերությունների հետ*:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից EASME ներկայացված 2017-2018թթ. ՁԵՑ աշխատանքային ծրագիրը հավանության է արժանացել: EASME է ներկայացվել նաև H2020 աշխատանքային ծրագիրը՝ նույն ժամանակահատվածի համար: Նշված ծրագրերում ևս Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հանդես

է գալիս որպէս ծրագրի համակարգող, իսկ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան՝ իբրև գործընկեր:

«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով «Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում» ծրագրային միջոցառման իրականացմանը ՀՀ պետական բյուջեից գումար չի հատկացվել:

8. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում

2016թ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը շարունակել է աշխատանքներ իրականացնել միջազգային/դոնոր կազմակերպությունների հետ համատեղ արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող ծրագրերի, ինչպես նաև նոր ծրագրային առաջարկների մշակման ուղղությամբ:

Առանձին ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները ներկայացվում են ստորև.

ա) ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացնող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի **«Տեղական տնտեսական զարգացում» բաղադրիչի** շրջանակում տնտեսության մասնակցային գնահատումներ են իրականացվել 5 համայնքային խմբերում (կլաստեր), որտեղ ընդգրկվել են 19 համայնքներ: Բացահայտվել են համայնքների տնտեսական զարգացման հեռանկարները և նախաձեռնությունները, որոնք ամփոփվել են համապատասխան հաշվետվություններում (*մանրամասները ներկայացված են 5-րդ բաժնում*):

Կատարված վերլուծությունները հիմք են ծառայել Ծրագրի թիրախային համայնքներում տնտեսական զարգացման մի շարք այլ միջոցառումների իրականացման համար: Մասնավորապես, մեկնարկել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրեր ՀՀ Արագածոտնի (ք. Աշտարակ), ՀՀ Գեղարքունիքի (ք. Սևան), ՀՀ Լոռու (գ. Օձուն), ՀՀ Վայոց Ձորի (ք. Եղեգնաձոր), ՀՀ Կոտայքի (ք. Չարենցավան) և ՀՀ Արարատի (ք. Արտաշատ) մարզերում (*մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում*):

Ծրագրի համար թիրախային ոլորտներ են ճանաչվել պանրագործությունը, չրերի արտադրությունը, ջերմոցային տնտեսությունները, սառնարանային տնտեսությունները և հյուրատնային բիզնեսը: Նշված ոլորտների զարգացման նպատակով, կախված պահանջարկից, կազմակերպվել են տեխնոլոգիական դասընթացներ/անհատական խորհրդատվություն: Բացի այդ, Ծրագրի շրջանակներում մշակվել են երեք գործարար ուղեցույցներ՝ «Ապրանքային նշանների գրանցման ուղեցույց», «Զբոսաշրջային տան կառավարման ուղեցույց», «Թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման ուղեցույց»:

Ծրագրի շահառուների գործարար և տեխնոլոգիական կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվում են նաև ոլորտային ուղղվածություն ունեցող

դասընթացներ և անհատական խորհրդատվություն (մանրամասները ներկայացված են 2.2 բաժնում, Հավելված 2.4):

Նպատակ ունենալով բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների մրցունակությունն ու կենսունակությունը՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է դրամաշնորհների տրամադրում՝ նյութեր և/կամ սարքավորումները ձեռք բերելու և շահառուին տրամադրելու միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում սարքավորումների/նյութերի ձևով դրամաշնորհներ են տրամադրվել 11 ՓՄՁ սուբյեկտների (մանրամասները ներկայացված են 5-րդ բաժնում, Հավելված 5):

«Շուկաների հասանելիություն» բաղադրիչի շրջանակներում շարունակվել են «3 Սերունդ» հովանոցային ապրանքանիշի առաջնղման աշխատանքները: Ավելի քան 20 ընկերությունների տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն նոր շուկաներ մուտք գործելու ուղղությամբ: Ծրագրի 7 շահառուներ «3 սերունդ» միասնական ապրանքանիշի ներքո մասնակցել են ս.թ. սեպտեմբերի 15-17-ը Երևանում կայացած «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսին և 4-ը մասնակցել են ս.թ. սեպտեմբերի 24 «Գյուղական կյանքի և ավանդույթների փառատոնին»: Ներկայումս ընթացքի մեջ է Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայում կազմակերպվող Ամանորյա և Սուրբ ծննդյան տոնավաճառին «3 սերունդ» միասնական ապրանքանիշի ներքո Ծրագրի 3-4 շահառուների մասնակցության հետ կապված աշխատանքները:

«Փոքր ենթակառուցվածքների զարգացում» բաղադրիչի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են 10 ենթակառուցվածքային ծրագրեր ՀՀ Արագածոտնի, Տավուշի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի մարզերում: Ընթացքի մեջ են ևս 5 ծրագրեր: Նշված բաղադրիչի շրջանակներում «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի» (ԱԳԶԿ) հետ համագործակցությամբ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում և ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գյուղ համայնքում հիմնվել են «Գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոններ (ԳԱՍԿ)»: Մասնագիտացված կենտրոններն ուղղված են Հայաստանում անասնապահության ոլորտի զարգացմանը և նպաստելու են առաջադեմ տեխնոլոգիաների և ֆերմերային գործարարության զարգացման փորձի առաջխաղացմանը (մանրամասները ներկայացված են 5-րդ բաժնում):

«Գյուղական համայնքների բնության պահպանություն» բաղադրիչի շրջանակներում կայուն զարգացում ապահովելու նպատակով աջակցություն է ցուցաբերվում աղետակայուն համայնքների ձևավորմանը, որոնք իրենց զարգացման պլաններում կձեռնարկեն քայլեր ռիսկերի կառավարման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) վերլուծություններ են իրականացվել Ծրագրի թիրախային 7 գյուղական համայնքներում: Վերլուծության հետ միասին համայնքին է հանձնվում նաև իրենց համայնքի աղետների ռիսկերի կառավարման հավաստագիրը:

Բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվելու նաև բացասական ազդեցության տակ գտնվող համայնքներին՝ բնապահպանական ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում: Բացասական ազդեցության տակ գտնվող համայնքները հնարավորություն ունեն բնապահպանական ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից ստանալու նպատակային հատկացումներ, որոնք առաջանում են տվյալ համայնքներում ձեռնարկությունների բնապահպանական վճարներից:

Հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է ցուցաբերվել Ախթալա համայնքում պուրակի (կանաչ գոտու) կառուցման աշխատանքներին: Մասնավորապես, աջակցություն է ցուցաբերվել համայնքին համապատասխան առաջարկի մշակման և ՀՀ

բնապահպանության նախարարություն ներկայացման հարցում, ինչպես նաև համաֆինասավորվել են շինարարական աշխատանքները:

Նույն բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Քաջարան համայնքում պլաստիկ թափոնների հավաքման հարցերում: Մասնավորապես, աջակցություն է ցուցաբերվել համայնքին համապատասխան առաջարկի մշակման և ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացման հարցում, ինչպես նաև պլաստիկ թափոնների հավաքման 30 արկղների պատրաստման և տեղադրման հարցում:

Ներկայումս ընթացքի մեջ են Բագրատաշեն համայնքում կանաչ գոտու ստեղծման ծրագրի մշակման աշխատանքները:

բ) «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր

Ծրագրի շրջանակներում ընտրված երիտասարդ գործարարներին տեխնիկական և ֆինանսական աջակցությունը տրամադրվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից արդեն իսկ փորձարկված մեթոդների և գործիքների միջոցով, ներառյալ՝ ձեռնարկատիրական հմտությունների զարգացման դասընթացներ, գործարար ծրագրերի մշակում, անհատական խորհրդատվություններ, վարկային երաշխավորությունների տրամադրում առավել իրատեսական գնահատված ծրագրերին և այլն:

Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել 25 «Սկսնակ գործարարների աջակցության ծրագրեր» շուրջ 300 սկսնակ երիտասարդ գործարարների մասնակցությամբ և արդյունքում ունենալ առնվազն 80 ֆինանսավորված գործարար ծրագրեր:

Ծրագրի ընդհանուր տևողությունը 44 ամիս է: Ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է Ավստրիայի կառավարության կողմից:

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են երիտասարդների մասնակցությամբ «Սկսնակ գործարարների աջակցության» 2 ծրագրեր (*մանրամասները ներկայացված են 2-րդ բաժնում, Հավելված 2. 1*):

գ) «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում – փուլ - 2» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ (Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն) համատեղ ծրագիր

2016թ. հուլիսի 18-ից մեկնարկել է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում – փուլ - 2» ծրագիրը, որը հանդիսանում է 2013 -2016 թթ. իրականացված «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում Հայաստանում» ծրագրի շարունակությունը:

Ծրագրի «փուլ 2»-ը ուղղված է Ծրագրի նախորդ փուլի իրականացման ընթացքում ստեղծված դրական արդյունքների և ազդեցությունների տարածմանն ամբողջ երկրում՝ ավելի ընդարձակ առաջադրանքներով, ինչպիսիք են արտահանման ու զբոսաշրջության առաջնորդումը/խթանումը տեղական ու միջազգային շուկաներում:

Ծրագրի հիմնական գործողությունները ներառում են.

- Հայ փորձագետների կարողությունների զարգացում,

- Հայկական տեղական ապրանքերի առաջնորդում միջազգային շուկաներում),
- Ծրագրի փորձնական իրականացման վայրերի վերաբերյալ զբոսաշրջային փաթեթների առաջնորդում տեղական և միջազգային շուկաների համար,
- Տեխնիկական աջակցության ցուցաբերում աճի ներուժ ունեցող ՓՄՁ-ներին,
- Շուկայավարման հարթակների ձևավորում՝ տեղական ապրանքերի և ծառայությունների ներկայացման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Ծրագրի միացյալ համակարգող խորհրդի առաջին նիստը, որի արդյունքում հաստատվել է Ծրագրի իրականացման առաջին տարվա գործողությունների պլանը:

Հաշվետու ժամանակահատվածում մեկնարկել է «Խորացված ՄԳՄԱ մեթոդի» մշակման գործընթացը, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել սկսնակ և գործող ՓՄՁ-ներին տեխնիկական աջակցության համալիր գործիքակազմ, որը կընդլայնի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության հնարավորությունները: Այս գործողության շրջանակում ս. թ. նոյեմբերի 1-ից 11-ը իրականացվել է «Հայկական խորացված ՄԳՄԱ մեթոդներ – սկսնակ մակարդակ» դասընթացավարների դասընթացը, որին մասնակցել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների և բիզնեսի աջակցության այլ կառույցների թվով 20 ներկայացուցիչներ: Դասընթացի երկրորդ փուլը նախատեսված է իրականացնել 2017թ. առաջին եռամսյակի ընթացքում:

Ծրագրի մեկնարկից սկսված հետազոտական աշխատանքներ են իրականացվում Լոռու և Սյունիքի մարզերում ճամփեզրյա կայանների հիմնման գործողությունների շրջանակում:

Արտահանման խթանմանն ուղղված գործողությունների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում ծրագրի փորձագիտական թիմը այցելություններ է իրականացրել Հայաստանի մարզերում գործող և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտների՝ նրանց արտադրական պայմաններին, կարողություններին և արտահանման փորձին ծանոթանալու նպատակով: Հավաքագրված տեղեկատվության հիման վրա կմշակվեն համապատասխան գործողություններ:

Տեղական զբոսաշրջության խթանման գործողությունների շրջանակում հաշվետու ժամանակահատվածում այցելություններ են իրականացվել մարզեր՝ զբոսաշրջային ռեսուրսների, հյուրընկալության ենթակառուցվածքների, դրանց կողմից մատուցվող ծառայությունների որակին ծանոթանալու նպատակով: Հավաքագրված տվյալները մշակվել են և կատարվել են համապատասխան եզրակացություններ՝ հետագա գործողությունների պլանավորման համար: Այս գործողության շրջանակում ս. թ. հոկտեմբերի 18-ին կազմակերպվել է խմբային քննարկում 8 (ութ) ներքին զբոսաշրջության մեջ մասնագիտացված տեղական տուրօպերատորների հետ: Նրանց ներկայացվել են ճապոնացի զբոսաշրջիկների նախասիրությունները և առաջարկվել մշակել զբոսաշրջային փաթեթներ՝ ձևավորված հատուկ ճապոնացի զբոսաշրջիկների համար: Փաթեթների մշակման գործողությունները ներկայումս ընթանում են ճապոնացի փորձագետների հետ համագործակցությամբ: Աշխատանքի ավարտից հետո նախատեսվում է մշակված առաջարկները ներկայացնել ճապոնական տուրօպերատորներին:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի աջակցությամբ 3 (երեք) ՓՄՁ սուբյեկտներ մասնակցել են «Գյուղական կյանքի և ավադույթների փառատոնին», որը տեղի է ունեցել ք. Երևան, Անգլիական այգում: Այս միջոցառման տիպի շուկայավարման

հարթակը օգտագործվել է շահառուների արտադրանքի ներկայացման, նրանց արտադրանքի վերաբերյալ կարծիքների հավաքագրման և նոր արտադրատեսակների փորձարկման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել նաև Ճապոնիայում կայանալիք վերապատրաստման դասընթացի կազմակերպման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Ծրագրի միջոցներով Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի տեխնիկական հնարավորությունների զարգացման նպատակով ձեռք են բերվել համակարգչային և գրասենյակային տեխնիկա:

դ) ԵՄ տարածքային զարգացման պիլոտային դրամաշնորհային ծրագիր (Pilot Regional Development Programme (PRDP) – Armenia)

Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը մասնակցում է ԵՄ կողմից ֆինասավորվող մրցույթին չորս տեղական կազմակերպությունների հետ գործընկերությամբ իր կողմից մշակված ծրագրային առաջարկով "Boosting competitiveness of regional SMEs, as a core precondition for local/regional economic development":

Ծրագրի արդյունքում կստեղծվեն ավելի քան 60 կայուն աշխատատեղեր և կստեղծվեն շուրջ 50 նոր ՓՄՁ-ներ, շուրջ 100 ձեռնարկություններ կստանան բազմակողմանի աջակցություն և կգրանցեն մրցունակության աճ (շրջանառության աճ, աշխատատեղերի աճ, նորարարական մոտեցումներ բիզնեսի կազմակերպման և կառավարման հարցերում, նոր արտադրանք/ծառայություն, նոր շուկաներ և այլն):

Ծրագիրն ունի ենթակառուցվածքային բաղադրիչ, որի շրջանակներում նախատեսվում է «ճամփեզրյա կայանի» կառուցում, որը կկատարի հետևյալ հիմնական գործառույթները.

- 1) տեղական արտադրանքի ուղիղ վաճառքի կետ,
- 2) տեղեկատվական կենտրոն և հանգստի կետ զբոսաշրջիկների համար,
- 3) ուսուցողական կենտրոն տեղի գործարարների համար:

Ծրագիրն իրականացվելու է կոնսորցիումի կողմից, որը կգլխավորի Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ը: Գործընկեր կազմակերպություններն են. «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ, «Սյուն» ՀԿ:

Ս.թ. հոկտեմբերի 12-ին Եվրահանձնաժողովից ստացված պաշտոնական գրության հիման վրա Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի առաջարկը անցել է բոլոր գնահատման փուլերը, Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ-ի հետ կկնքվի դրամաշնորհային համաձայնագիր և կներկայացվի ֆինանսավորման: Ս.թ. դեկտեմբերի 13-ին տեղի է ունեցել դրամաշնորհային համաձայնագրի պաշտոնական ստորագրման արարողությունը: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2017թ. հունվար ամսին: Ծրագրի ընդհանուր տևողությունը 24 ամիս է:

ե) «ԷՐԱՍՄՈՒՍ Երիտասարդ ձեռներեցների համար» ծրագիր

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը որպես գործընկեր կազմակերպություն մասնակցում է ԵՄ կողմից ֆինասավորվող «ԷՐԱՍՄՈՒՍ Երիտասարդ ձեռներեցների համար» ծրագրին (Ծրագիր): ERASMUS ծրագրին Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը հնարավորություն ունեցավ դիմելու COSME ծրագրին Հայաստանի անդամակցության շնորհիվ:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը Ծրագրին մասնակցում է 9 երկրներից ներկայացված և 10 կազմակերպություններից բաղկացած կոնսորցիումով: Կոնսորցիումի համակարգող կազմակերպությունն է Տերասսայի առևտրաարդյունաբերական պալատը (Իսպանիա), իսկ գործընկեր կազմակերպություններն են՝ Օվիեդոյի առևտրաարդյունաբերական պալատը (Իսպանիա), Լեհաստանի Ձեռնարկությունների Զարգացման Գործակալությունը (Լեհաստան), Կրթության և Նորամուծությունների Կենտրոնը (Սլովակիա), Բողզենի Նորամուծությունների Կենտրոնը (Գերմանիա), OXALIS ձեռնարկատերերի միությունը (Ֆրանսիա), Վեզպրեմի առևտրի պալատը (Հունգարիա), Թուրինի առևտրաարդյունաբերական պալատ (Իտալիա), Ֆլանդրիայի առևտրաարդյունաբերական պալատը (Բելգիա) և Հայաստանի ՓՄՁ զարգացման կենտրոնը (Հայաստան):

ԷՐԱՍՄՈՒՍ ծրագրի նպատակն է նպաստել Երիտասարդ ձեռներեցների ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը, մրցունակության բարձրացմանը՝ արտերկրյա համանման ոլորտում գործող փորձառու կազմակերպությունների հետ փորձի փոխանակման և գործնական կապերի հաստատման միջոցով:

Սույն թվականի մայիս ամսին 5 տարի ժամկետով շրջանակային համաձայնագիր է ստորագրվել Կոնսորցիումի և Եվրահանձնաժողովի միջև, իսկ նոյեմբերի 30-ին Կոնսորցիումի կողմից մշակվել է ներկայացվել է 2017-2018թթ. աշխատանքային ծրագիրը: Ծրագիրը մեկնարկը նախատեսվում է 2017թ. փետրվարից:

9. Աջակցության այլ ծրագրեր

ա) Գյուղատնտեսական տեխնիկայի և հարակից սարքավորումների ձեռքբերմանն աջակցության ծրագիր

Համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N 650-ն որոշման՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը 2015 թվականին կնքել է պայմանագրեր Բելառուսի Հանրապետության «Մինսկի տրակտորների գործարան»-ի և Ռուսաստանի Դաշնության «Ռոստոսելմաշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ, կոմբայններ ու տրակտորներ ձեռք բերելու և ՀՀ քաղաքացիներին, համայնքներին ու կազմակերպություններին համապատասխան պայմաններով տրամադրելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում վաճառվել է ռուսական արտադրության «Նիվա էֆֆեկտ» մակնիշի 1 հացահատիկահավաք կոմբայն, 2 հատ ճշգրիտ ցանքի սերմնացան ՍՊՁ-6ԼՏ, 2 հատ փխրեցուցիչ (Հավելված 7):

բ) «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցում» ծրագիր

Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N1017-Ն որոշման՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամին հատկացվել է 150,0 մլն ՀՀ դրամ գումար ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի սուբսիդավորման նպատակով:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 662-Ն և 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N1017-Ն որոշումներով՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից մշակվել է «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցման կարգ», ըստ որի, որպես թիրախ ընտրվել են ՀՀ գյուղական համայնքների ՓՄՁ սուբյեկտներ, որոնց շրջանառությունը չի գերազանցում 10,0 մլն ՀՀ դրամը: Բացառության կարգով աջակցությունից կարող են օգտվել են ՀՀ մարզերի քաղաքային համայնքների առևտրի կազմակերպման կենտրոններում գործող ՓՄՁ սուբյեկտները:

2016 թվականի ընթացքում «ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման արժեքի փոխհատուցման» ծրագրի շրջանակներում սուբսիդավորվել է ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված 472 հայտ: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 14,860,000 ՀՀ դրամ (*Հավելված 8*):

10. «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին»
2016 թվականի ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանը «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագրով» նախատեսված 152,600,000 ՀՀ դրամից առ 31. 12. 2016 թվականին պետական բյուջեից ուղղվել է 143,062,500 ՀՀ դրամ: